«Ա. Սահակ – Ա. Մեսրոպ» շքանշան՝ Ռադիկ Մարտիրոսյանին եւ Վլադիմիր Բարխուդարյանին

Հունիսի 8-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ Վեհարանի հանդիսությունների դահլիճում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց ՀՀ ԳԱԱ նախագահ, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ տիար Ռադիկ Մարտիրոսյանին եւ ԳԱԱ հայոց պատմության եւ

հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ տիար Վլադիմիր Բարխուդարյանին՝ բարձր գնահատելով նրանց ազգօգուտ ու եկեղեցաշեն արդյունաշատ վաստակը:

Շքանշանի հանձնման հանդիսությունը բացվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դիվանապետ Տ. Արշակ եպս Խաչատրյանի ողջույնի խոսքով:

ԳԱԱ փոխնախագահ Յուրի Շուքուրյանը եւ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը ներկայացրին մեծարյալների կյանքի ուղին՝ ընդգծելով նրանց մեծ ներդրումն ու վաստակը գիտության ոլորտում եւ կարեւորելով հայրենի երկրին բերած բուգում երախտիքները:

Մեծարյալներին գնահատանքի խոսք ասացին նաեւ ակադեմիկոսներ Նիկոլայ Հովհաննիսյանն ու Սերգեյ Համբարձումյանը:

Ապա Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբաններ Արարատ եպս Գալթագճյանը եւ Անուշավան եպս Ժամկոչյանը ընթերցեցին հայրապետական սրբատառ կոնդակները:

Տիար Ռադիկ Մարտիրոսյանին տրված կոնդակում ի մասնավորի ասվում է. «....Դուք անխոնջ նվիրումով, գիտական ու մանկավարժական արդյունաշատ գործունեությամբ Ձեր կյանքի ողջ ընթացքին ազնիվ ծառայություն եք մատուցում Հայրենի մեր երկրին ու հավատավոր ժողովրդին: Երեւանի պետական համալսարանում Ձեր ուսումնառությունն ավարտելուց հետո Դուք մնացիք մայր կրթօջախում եւ տասնյակ տարիներ Ձեր կարողություններն ի սպաս բերեցիք համալսարանին՝ նախ որպես դասախոս, ապա որպես ռեկտոր...

Գնահատարժան է նաեւ Ձեր գիտական վաստակը ֆիզիկայի բնագավառում եւ Ձեր ծառայությունը՝ Ռադիոֆիզիկայի եւ էլեկտրոնիկայի ինստիտուտի տնօրենի պատասխանատու պաշտոնում: Ձեր ղեկավարությամբ ինստիտուտի ձեռք բերած նվաճումները լայն կիրառություն են գտել մեր երկրում՝ ընդգրկելով գիտության եւ արտադրության տարբեր ոլորտները...

Այսօր Դուք անանդ նույն եռանդով կարեւոր ավանդ եք բերում գիտության զարգացմանը՝ որպես ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայի Նախագահ: Ուրախ ենք, որ Ձեր քաջահմուտ ղեկավարությամբ Ազգային Ակադեմիան շարունակում է արգասավորությամբ ծառայել մեր երկրին ու ժողովրդին՝ բարձր պահելով հայ գիտության վարկն ու համարումը ամբողջ աշխարհում:

Հարգարժան պրն Մարտիրոսյան, առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայություններին: Իբրեւ անդամ Գերագույն Հոգեւոր Խորհրդի, Դուք Ձեր հարուստ փորձառությամբ ու կարողություններով Ձեր գնահատարժան օգտակարությունն եք բերում, որպեսզի Մայր Հայրենիքում եւ Սփյուռքում առավել կազմակերպված լինի եկեղեցական մեր կյանքը, եւ միշտ զորավոր՝ հայորդյաց նվիրումն ու նախանձախնդրությունը հանդեպ ազգային եւ հոգեւոր մեր արժեքները»:

Տիար Վլադիմիր Բարխուդարյանին տրված կոնդակում ասվում է. «....Ավելի քան հիսուն տարիներ Դուք Ձեր ջանքերն ու նվիրումն եք բերում Հայոց պատմության տարբեր հարցերի լուսաբանմանը եւ նպաստում, որ մեր ժողովրդի հո-

գում արթուն լինեն անցյալի հիշատակներն ու արժեքները: Ձեր բազմաթիվ ուսումնասիրություններն ու հոդվածները, կազմած դասագրքերը, միջազգային գիտաժողովներում Ձեր զեկուցումները կարեւոր ավանդ են հայրենի պատմագիտությանը եւ ճանաչում են բերել Ձեզ Հայաստանում ու նրա սահմաններից դուրս:

Շարունակությունը՝ էջ 2

«Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշան՝ Ռադիկ Մարտիրոսյանին եւ Վլադիմիր Բարխուդարյանին

Սկիզբը՝ էջ 1

Մեծ է եւ գովարժան Ձեր վաստակը ե-ռիտասարդ սերնդի կրթության գործում: Երկար տարիներ դասավանդելով Երեւանի Պետական Համալսարանում եւ բարձրագույն այլ կրթօջախներում՝ Դուք փոխանցում եք Ձեր ուսանողներին ոչ միայն գիտելիք, այլեւ՝ Ձեր հոգու սերը մեր Հայրենիքի ու ժողովրդի հանդեպ, Ձեր նվիրումը պատմական գիտությանը: Գնահատելի են Ձեր ծառայությունները նաեւ Գիտությունների Ազգային Ակադեմիայում՝ պաշտոնավարելով որպես փոխնախագահ, ակադեմիկոս քարտուղար, հայոց պատմության եւ հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս քարտուղար:

Առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում, որ Դուք հավատավոր հոգով, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ որդիական սիրով Ձեր մեծ ու ազնիվ ներդրումն եք բերում մեր եկեղեցական կյանքում՝ որպես Գերագույն Հոգեւոր Խորհրդի անդամ մատուցելով Ձեր ծառայությունները ի հավետ պայծառություն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու»:

Կոնդակի ընթերցումից հետո Նորին Սրբությունը մեծարալների կուրծքը զարդարեց «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» շքանշանով:

Շքանշանի հանձնումից հետո երախտագիտության խոսք ասացին մեծարալները:

Տիար Ռադիկ Մարտիրոսյանն իր խոսքում ասաց. «Մեծ պատիվ է այսօր ինձ համար Հայոց Հայրապետի ձեռքից ստանալ մեր Եկեղեցու բարձրագույն պարգեւը: Ես կարծում եմ, որ այն Վեհափառի կողմից արժանավորումն է կրթության եւ գիտության ոլորտում իմ համեստ ավանդի»: Պրն Մարտիրոսյանը կարեւորեց այն հանգամանքը, որ հատկապես վերջին շրջանում՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհիվ, հնարավոր է լինում հասնել շատ խնդիրների լուծման՝ ի մասնավորի ընդգծելով նաեւ Եկեղեցու եւ պետության հարաբերությունները կարգավորող օրենքի ընդունման նշանակալիությունը: «....Ես ուզում եմ կոչ անել մեր բոլոր մտավորականներին, որ այն համագործակցությունը, որ ստեղծել է մեզ համար Գարեգին Երկրորդ Հայրապետը, շատ բարձր գնահատենք եւ մեծ նվիրումով աշխատենք այն խնդիրների ուղղությամբ, որոնք այսօր հուզում են մեր Եկեղեցուն, մեր ժողովրդին եւ մեր երկրին»,- եզրափակեց իր խոսքը Ռադիկ Մարտիրոսյանը:

Տիար Վլադիմիր Բարխուդարյանն իր խոսքում փաստեց, որ 12 տարի Գերագույն հոգեւոր խորհրդի անդամ լինելու շնորհիվ իր մեջ մեծ կապ է ստեղծվել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հետ, եւ այդ կապը լավագույնս նպաստել է ըմբռնելու այն մեծագույն դերը, որ ունեցել է եւ ունի մեր ժողովրդի կյանքում Հայ Առաքելական Եկեղեցին. «Հայ Եկեղեցու պատմությունը ոչ այլ ինչ է, եթե ոչ հայոց պատմություն: Հայ Եկեղեցու պատմությունը ստեղծել է հայագիտական մնայուն արժեքներ՝ հոգեւոր թե նյութական մշակույթի, այդ արժեքները պահպանել եւ փոխանցել սերունդներին»: Հանդիսությունը փակվեց Ամենայն Հայոց Հայրապետի օրհնության խոսքով: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայ Եկեղեցու «Ս. Սահակ - Ս. Մեսրոպ» բարձր պարգեւը տրվում է կրթության, գիտության եւ մշակույթի ոլորտի եկեղեցական երախտավորներին, ովքեր շարունակողներն են դառնում ս. Սահակի եւ ս. Մեսրոպի առաքելության: Նորին Սրբությունն իր խոսքում ասաց. «....Մենք մեզ զորեղ ենք զգում՝ տեսնելով մեր մտավորականությանը կանգնած մեր կողքին, մեր եկեղեցական սպասավորների հետ ծառայության մեջ՝ ե՛ւ հոգեւոր, ե՛ւ աշխարհիկ ոլորտներում:

...Եկեղեցին միշտ էլ հովանավորող է եղել մեր մշակույթին, գիտությանն ու կրթությանը: Դժբախտաբար այնպիսի ժամանակներ բաժին ընկան մեր Եկեղեցուն, որ նա չկարողացավ այդ ոլորտում առավել աջակցություն ունենալ եւ այդ առաքելությունն ամբողջականորեն իրականացնել: Եկեղեցու առջեւ խնդիր բարձրացավ վերակազմակերպելու եւ վերակառուցելու հոգեւոր կյանքը: Փառք Աստծո, այսօր Եկեղեցու համար զգալիորեն լուծվել են շատ խնդիրներ, եւ մենք աստիճանաբար Աստծո օրհնությամբ եւ օգնականությամբ պիտի կարողանանք վերադարձնել Եկեղեցուն այդ պատվավոր տիտղոսը՝ հովանավոր հայ գիտության, կրթության եւ մշակույթի»: Հանդիսության ընթացքում արեւմտաեվրոպական եւ հայ կոմպոզիտորների ստեղծագործություններով ելույթ ունեցավ մեներգչուհի Ծովինար Ամիրյանը: